Հայաստանի Հանրապետություն

Կոտայքի մարզ

Ջրվեժ համայնքի 2018 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ռոբերտ Պետրոսյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 4-ի թիվ 28-Ա որոշմամբ
(նիստի ամսաթիվ)

ՋՐՎԵԺ 2018 թ.

Բովանդակություն

Ներածություն
.....3
1.Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները
.....4
2.Համայնքի 2018թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքը (ըստ ոլորտների)
.....8
3.Համայնքային գույքի կառավարման 2018 թ. ծրագիրը.....29
4.Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը
.....33
5.Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը.....35

Ներածություն

ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է: ՏԱՊ-ը այն գործիքն է, որը թույլ է տալիս հիմնավորված, փաստարկված (արդյունքային ցուցանիշների միջոցով) կերպով գնահատել ՏԻՄ-երի և համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունավետությունը մեկ տարվա ընթացքում՝ հիմք ստեղծելով համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ) ճշգրտման և հաջորդ տարիների պլանավորման և բյուջետավարման համար:

Ջրվեժ համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

▪ համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,

▪ սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),

▪ համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների շուրջ,

▪ շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,

▪ որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Ջրվեժ համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2018 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Ջրվեժ համայնքը մաքուր, բարեկարգ, կանաչապատ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և անհրաժեշտ աշխատատեղերով ապահովված, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ ունեցող, զարգացող փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, զբոսաշրջության համար գրավիչ տարածք է: Համայնքում մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը համապատասխան ցուցանիշի 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիքսված արժեքն է: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1 - շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ. ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 - կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	8,37	7,5
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	64.3	67
Գործազրկության մակարդակի նվազում	30	25
Համայնքում ՓՄՁ-ների թիվը և դրանցում աշխատատեղերի քանակը	71/330	80/390
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	10366	10670

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1.Ընդհանուր			
Ապահովել տեղական ինքնակառավարումը և բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցումը Ջրվեժ բազմաբնակավայր համայնքում:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի և համայնքապետարանի աշխատակազմի գործունեությունից, մատուցված համայնքային ծառայություններից, %	70	80
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	64,3	67
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Նպաստել երկրի պաշտպանունակության բարձրացմանը:	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այո/ոչ	այո	այո
	Զորակոչիկների բավարավածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա), %	80	100
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Ապահովել փրկարար ծառայությունների իրականացումը:	Փրկարար ծառայությունների դասընթացների անցկացմանը բնակիչների մասնակցության աստիճանը, %	20	35
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Ապահովել համայնքային ենթակառուցվածքների պահպանումն ու նոր ենթակառուցվածքների ստեղծումը	Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	25,3	26
	Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը, %	45	60
	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, %	20	30

	Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորված տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	20,3	25
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Բարելավել ներհամայնքային ճանապարհների անցանելիության մակարդակը:	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների մակերեսը ընդհանուրի մեջ, %	5	7
	Համայնքային ենթակայության ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը, %	45	60
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն			
Ապահովել համայնքի բնակիչներին նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	85	90
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %	80	90
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	60	70
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	15,3	18
	Ամսվա ընթացքում մատուցված նախադպրոցական կրթության ծառայության արժեքը մեկ երեխայի հաշվով, հազ.դրամ	31,03	32
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել մշակութային միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը:	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	70	80
	Տարվա ընթացքում անցկացվող		

	մշակութային միջոցառումների թիվը	4	5
Ոլորտ 10. Առողջապահություն			
Աջակցել համայնքի բուժ. ամբուլատորիաներին, հատկացնել դրամաշնորհ՝ գույքի, էներգետիկ ծախսերի փոխհատուցման համար	Բուժ. ամբուլատորիայի ապահովվածությունը համապատասխան գույքով, %	75	80
	Բնակիչների բավարարվածությունը առողջապահության ծառայություններից, %	45	55
	Առողջապահական ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	75	85
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:	Մատուցված մարզական ծառայությունների մասին բնակիչների կարծիքը	Միջին	Լավ
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Բարելավել սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական վիճակը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	55	70
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների և ձեռնարկատերերի բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներից (սոց. հարցումներ), %	70	80
	Աղբահանության կազմակերպման նպատակով բնակչության հետ կնքված պայմանագրերը, (%)	98,1	98,7
	Աղբահանության կազմակերպման նպատակով իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը, (%)	93	95
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
Բարձրացնել հանրային լսումներին բնակիչների մասնակցության	Հանրային լսումների քանակը	2	3

աստիճանը:			

2. Համայնքի 2018թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացվում են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	93,925.6	Բոլոր բնակավայրերում
2.	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	5,998.8	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		99,924.4	
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
1.	Պաշտպանության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում	830.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		830.0	
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
1.	Փրկարար ծառայությունների իրականացում	1,630.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		1,630.0	
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Լուսավորման համակարգերի կառուցում	25,942.0	Ջրվեժ և Զովք բնակավայրերում
2.	Լուսավորման համակարգերի ընթացիկ սպասարկում և փողոցային լուսատուների փոխարինում լուսադիոդային լուսատուներով	17,642.1	Բոլոր բնակավայրերում
3.	Ջրագծի և խորքային հորի կառուցում, պոմպի մոնտաժում	20,250.0	Ձորաղբյուր բնակավայրում
4.	Ջրագծերի ընթացիկ նորոգում և սպասարկում	16,596.0	Ձորաղբյուր բնակավայրում
5.	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	1,825.0	Ձորաղբյուր և Զովք բնակավայրերում
Ընդամենը		82,255.1	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Ջրվեժ համայնքի փողոցների բարեկարգում և կառուցում	78,671.0	Բոլոր բնակավայրերում

2.	Համայնքի փողոցների ընթացիկ նորոգում և սպասարկում	18,494.0	Ձորաղբյուր և Ջրվեժ բնակավայրերում
2.	Տրասպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	3,020.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		100,185.0	
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Նախադպրոցական կրթական հաստատության ծառայության մատուցման ապահովում	22,145.8	Ձորաղբյուր բնակավայր
2.	Արտադպրոցական դաստիարակության ապահովում	20,157.2	Ջրվեժ բնակավայր
3.	Ձովքի միջնակարգ դպրոցին դրամաշնորհի հատկացում	200.0	Ձովք բնակավայր
4.	Առաջին դասարանցիների համար գրենական նյութերի ձեռքբերում	1,450.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		43,953.0	
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Համայնքում մշակութային ծառայությունների կազմակերպում	3,574.0	Բոլոր բնակավայրերում
2.	Տեղեկատվական ծառայությունների մատուցման ապահովում	470.0	Բոլոր բնակավայրերում
3.	Հասարակական և կրոնական ծառայությունների ծախսեր	791.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		4,835.0	
Ոլորտ 10. Առողջապահություն			
1.	Ջրվեժ համայնքի բուժ. ամբուլատորիաներին դրամաշնորհ՝ գույքի ձեռքբերման և էներգետիկ ծախսերի փոխհատուցման նպատակով	1,400.0	Ջրվեժ և Ձորաղբյուր բնակավայրեր
Ընդամենը		1,400.0	
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
1.	Հանգստի և սպորտի ծառայություններ	250.0	Բոլոր բնակավայրեր
Ընդամենը		250.0	
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	3,870.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		3,870.0	
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	80,803.7	Բոլոր բնակավայրերում
2.	Ջրահեռացման համակարգի կառուցում	7,867.0	Ջրվեժ բնակավայրում
3.	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներ	1,000.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		89,670.7	
Ընդհանուրը		**445,229.0**	

Աղյուսակ 4. ՏԱՊ-ով նախատեսված ոլորտների ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատուներ	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					
Ոլորտային նպատակ Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 70% ✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, 5% ✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 64.3 %			
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում					
Ծրագրի նպատակ Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունները	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը՝ 29 ✓Համայնքի ենթակայության կազմակերպությունների թիվը՝ 3 ✓ Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, 5% ✓ Համայնքի աշխատանքային				Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են եղել

	օրերի թիվը տարվա ընթացքում, 273 օր ✓ Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը, այո ✓ ՏԻՄ-երի,աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազեցում, 5%-ով ✓ Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը՝ 80% ✓ Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 4 օր				

Միջոցառումներ	**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**
1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկման վճարների կատարում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ:	1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 93,925.6 հազ.դրամ 2. Համայնքի աշխատակազմի աշխատողներ՝ 30 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք 5. Վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքեր և գույք 6. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը՝ 50 7. Համայնքի պաշտոնական համացանցային կայք՝ jrvezh-kotayq.am 8. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր՝ 3

Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում					
Ծրագրի նպատակ Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** Աշխատակազմի կառավարման համակարգերի վիճակը,	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային,	Աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և

կարողությունները	աշխատակիցների հմտությունները և մասնագիտական կարողությունները՝ գերազանց	տարեկան հաշվետվություններ			ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Աշխատակազմի կառուցվածքը, կանոնադրությունը, աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն) համակարգերը բարելավվել են	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Աշխատակազմում կիրառվող համակարգչային տեխնիկայի թիվը՝ 50 ✓ Աշխատակազմի կառուցվածքի, կանոնադրության, աշխատակարգերի և առկա կառավարման բարելավված համակարգերի առկայություն՝ այո, ✓ Ծրագրի իրականացման ժամկետը՝ 1 տարի	Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,			Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են եղել
Միջոցառումներ ✓ ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում ✓ Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի խմբագրում ✓ Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 5.998.8 հազ. դրամ ✓ Աշխատակազմում առկա վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր: ✓ Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն:			
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում					
Ոլորտային նպատակ Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը–այո ✓ Զորակոչիկներիբավարավածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա) - 100 %			
Ծրագիր 1. Քաղաքացիական պաշտպանության կառավարմանն աջակցություն					
Ծրագրի նպատակ Նպաստել երկրի պաշտպանունակության	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**	Ծրագրի գնահատման համակարգ,	Համայնքի ղեկավար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային,

մակարդակի բարձրացմանը:	Զորակոչիկների ծնողների բավարարվածությունը համայնքի կողմից իրականացված աջակցության միջոցառումներից (հարցումների հիման վրա) - շատ լավ	ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ			տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Կազմակերպվել են հանդիպումներ զինակոչիկների հետ:	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից – շատ լավ ✓ Ծրագրի իրականացման ժամկետը – 1 տարի ✓ Հանդիպումների քանակը՝ 6				Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ առկա են եղել
Միջոցառումներ ✓ Հանդիպումներ համայնքի զինակոչիկների հետ: ✓ Զինակոչիկների տեղափոխում զինկոմիսարիատ:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** 1.Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 830.0 հազար դրամ 2.Աշխատակազմում զորակոչի հարցերով զբաղվող աշխատակիցների թիվը – 2			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում					
Ոլորտային նպատակ Բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման մակարդակը			**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ** Համայնքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստվածության մակարդակը – ավելի շատ լավ, քան վատ:		
Ծրագիր 1. Փրկարար ծառայությունների իրականացում					
Ծրագրի նպատակ Ապահովել փրկարար ծառայությունների մատուցումը	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** Փրկարար ծառայությունների դասընթացների անցկացմանը բնակիչների մասնակցության աստիճանը, 30 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

Միջանկյալ արդյունք 1 Բարձրացել է համայնքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստակամության մակարդակը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Արտակարգ իրավիճակներում բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման պատրաստվածության և իրազեկվածության մակարդակը –բավարար, ✓ Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ՔՊ մարմինների հմտությունների կատարելագործման նպատակով անցկացված վարժանքների թիվը – 2 ✓ Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի				Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ առկա են եղել
Միջոցառումներ Արտակարգ իրավիճակներում համապատասխան փրկարար ծառայությունների իրականացում		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 1,630.0 հազար դրամ			
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ՝ 26 % ✓ Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածությունը՝ 45 % ✓ Բնակիչների բավարարվածությունը գիշերային լուսավորությունից՝ 40 %			
Ծրագիր 1. Ջրվեժ համայնքում լուսավորության ցանցի ընդլայնում և ընթացիկ սպասարկում					
Ծրագրի նպատակ Ապահովել Ջրվեժ համայնքի	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային,	Համայնքի ղեկավար, վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական

ներհամայնքային փողոցների լուսավորվածությունը	✓ Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, 25 %	տարեկան հաշվետվություններ			և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Ջրվեժ համայնքի փողոցները լուսավոր են և անվտանգ	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 34 կմ 116 մ ✓ Երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացում, այո ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժամ ✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը 6 ժամ	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել
Միջոցառումներ 1. Շինարարական աշխատանքների կատարման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2. Աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** 1. Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, 25,942.0 հազ. դրամ, 2. Լուսավորման համակարգերի ընթացիկ սպասարկում՝ 17,642.1 հազ. դրամ, որից՝ լուսատուների փոխարինում լուսադիոդային լուսատուներով՝ 2,400.0 հազ. դրամ 3. Համայնքապետարանից՝ փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը՝ 2 4. Առկա լուսավորության համակարգի հենասյուների թիվը՝ 393 5. Առկա դրոսելների թիվը՝ 234 6. Առկա մեկնարկիչների թիվը՝ 219			
Ծրագիր 2. Ջրագծերի կառուցում, ընթացիկ նորոգում և սպասարկում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքի բնակչությանը խմելու ջրով	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Կառուցված ջրագիծ՝ 1800 գմ ✓ Կառուցված խորքային հոր՝ 1	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների

	հատ ✓ Տեղադրված պոմպ՝ 1 հատ				անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Բնակիչները ապահովված են ջրով	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Ջրագծերի կառուցման աշխատանքների տևողությունը, 3 ամիս, ✓ Ջրագծի կառուցումից օգտվող բնակիչների թիվը, 350 մարդ ✓ Բնակիչների կարծիքը ջրագծերի կառուցման վերաբերյալ, շատ լավ	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են
Միջոցառումներ 1. Ձորաղբյուր բնակավայրում ջրագծի ցանցի կառուցում, 2. Խորքային հորի կառուցում, 3. Պոմպի մոնտաժում, 4. Նորոգման աշխատանքների իրականացում և վերահսկում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 20,250.0հազար դրամ ✓ Ջրագծերի ընթացիկ սպասարկում՝ 16,596.0 հազ. դրամ ✓ Ցանցի կառուցման աշխատանքներն իրականացնող աշխատակիցներ:			
Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ոլորտային նպատակ Բարելավել համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Բարեկարգ ներբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 55,4 %			
Ծրագիր 1. Ջրվեժ համայնքի փողոցների կառուցում, բարեկարգում և սպասարկում					
Ծրագրի նպատակ Ապահովել ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցումը, ճանապարհների	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Ներհամայնքային ճանապարհների կառուցման, սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը, լավ	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, ղեկավարի տեղակալ, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

կառուցումը և բարեկարգումը					
Միջանկյալ արդյունք 1 Բարեկարգվել են ներհամայնքային ճանապարհները	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ ժամկետ)** ✓ Աշխատանքների իրականացման ժամկետը, 1,5 ամիս ✓ Կառուցված և բարեկարգված ներբնակավայրային ճանապարհների մակերես՝ 12,100 քառ. մ ✓ Բնակիչների կարծիքը փոսալցված և բարեկարգված ճանապարհների վերաբերյալ – լավ ✓ Փոսալցված հատվածների մակերեսը՝ 2650 քառ. մետր	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են
Միջոցառումներ ✓ Ջրվեժ համայնքի ներհամայնքային ճանապարհների կառուցման, բարեկարգման աշխատանքների իրականացում և վերահսկում ✓ Իրականացնել ներհամայնքային ճանապարհների սպասարկման աշխատանքներ:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 97,165.0 հազար դրամ, այդ թվում՝ - ներհամայնքային ճանապարհների կառուցում՝ 78,671.0 հազար դրամ - փողոցների ընթացիկ նորոգում և սպասարկում՝ 18,494.0 հազ. դրամ ✓ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներում ներգրավված տեխնիկայի քանակը՝ 2 ✓ Համայնքապետարանից ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքները կազմակերպող աշխատակիցների թիվը, 2			
Ոլորտ 8. Կրթություն					
Ոլորտային նպատակ Ապահովել համայնքի բնակիչներին նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բարելավել համայնքում միջնակարգ կրթության մատուցման որակը:		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, 15,3 % ✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, 90% ✓ Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 12%			
Ծրագիր 1. Նախադպրոցական ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ	**Ծրագրի ազդեցության**	Ծրագրի գնահատման	Համայնքի ղեկավար,	2018թ.	Համապատասխ

Բարելավել համայնքում նախադպրոցական կրթական ծառայությունների մատուցման որակը	**(վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, 90 %	համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավար, ՆՈՒՀ տնօրեն	հունվար-դեկտեմբեր	ան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Ջրվեժ համայնքում ապահովվել է նախադպրոցական ուսումնական հաստատության բնականոն գործունեությունը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թիվը՝ 63 ✓Մանկապարտեզի խմբերի թիվը՝ 2 ✓ՆՈՒՀ-ում աշխատող աշխատակիցների թիվը՝ 13 ✓Մանկապարտեզում օրվա ընթացքում սննդի տրամադրման թիվը՝ 3 ✓Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, լավ ✓Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը շաբաթվա ընթացքում, 5 օր				Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Ջրվեժհամայնքում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում ✓ Նախադպրոցական կրթական ուսումնական հաստատության աշխատակազմի պահպանություն		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 22,145.8 հազ. դրամ ✓ Մանկապարտեզի սանիտարահիգիենիկ պայմանների համապատասխանությունը նորմատիվ պահանջներին, այո			
Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիարակության հաստատության գործունեության ապահովում, դասասենյակների հատակների նորոգում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայությունների	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Արտադպոցական դաստիարակության	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավար, արտադպրոցական դաստիարակության	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների

մատուցման որակի բարձրացումը, դասասենյակների հատակների նորոգումը	հաստատություն հաճախող երեխաների ընդհանուր թիվը՝ 112		հաստատության տնօրեն		անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Ջրվեժ համայնքում ապահովվել է արտադպրոցական հաստատության բնականոն գործունեությունը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Ծնողների բավարարվածությունը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայություններից, 85 % ✓ Արտադպրոցական դաստիարակության հաստատությունում աշխատող աշխատակիցների թիվը՝ 18 ✓ Դասասենյակների թիվը՝ 7 ✓ Ծրագրի իրականացման ժամկետը՝ 1 տարի				Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Ջրվեժ համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցում, ✓ Արտադպրոցական դաստիարակության հաստատության աշխատակազմի պահպանություն ✓ Դասասենյակների հատակների նորոգում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 20,157.2 հազ. դրամ			
Ծրագիր 3. Ջովքի միջնակարգ դպրոցին դրամաշնորհի հատկացում					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքում կրթական հաստատության սանիտարահիգիենիկ պայմանների բարելավումը, իրականացնել կոյուղու նորոգումը:	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Ծնողների կարծիքը մատուցվող դպրոցական կրթության ծառայության վերաբերյալ՝ գերազանց	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, վարչական ղեկավար, միջնակարգ դպրոցի տնօրեն	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

Միջանկյալ արդյունք 1 Բարձրացել է դպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Դպրոց հաճախող երեխաների թիվը՝ 115 ✓ Դպրոցում աշխատողների թիվը՝ 24 ✓ Ծրագրի իրականացման ժամկետը՝ 5 օր ✓ Բնակավայրի բնակիչների համար կրթական ծառայության հասանելիությունը, 100 %				Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել
Միջոցառումներ ✓ Տրամադրել Զովքի դպրոցին դրամաշնորհ, ✓ Դպրոցի առաջին հարկի կոյուղու նորոգման համար դրամաշնորհի հատկացում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 200.0 հազ. դրամ			
Ծրագիր 4. Առաջին դասարանցիների համար գրենական նյութերի ձեռքբերում					
Ծրագրի նպատակ Առաջին դասարանցիներին ապահովել գրենական պիտույքներով	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** Ծնողների բավարարվածությունը մատուցվող ծառայությունից՝ գերազանց	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, վարչական ղեկավար, դպրոցի տնօրեններ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Համայնքի դպրոցներում առաջին դասարանցիներն ապահովվել են գրենական պիտույքներով	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Բնակիչների կարծիքը ծրագրի վերաբերյալ՝ գերազանց ✓ Տրամադրվող գրենական նյութերի քանակը՝ 25 անուն ✓ Ծրագրի իրականացման ժամկետը՝ 10 օր				Համապատասխան ֆինանսական ռեսուրսներ առկա են եղել
Միջոցառումներ ✓ Գրենական նյութերի ձեռքբերում և տրամադրում աշակերտներին		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի տարեկան բյուջեի միջոցներ՝ 1,450.0 հազ. դրամ			

Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Ոլորտային նպատակ Ապահովել համայնքում միջոցառումների հավուր պատշաճի կազմակերպումը և անցկացումը,		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 80%			
Ծրագիր 1. Համայնքում մշակութային ծառայությունների կազմակերպում					
Ծրագրի նպատակ Ակտիվացնել համայնքի մարզական և մշակութային կյանքը	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 80%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Կազմակերպվել են տոն և հիշատակի օրերին նվիրված և այլ միջոցառումներ:	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը, 5 ✓ Բնակիչների կարծիքը կազմակերպվող միջոցառումներից՝ լավ ✓ Ծրագիր իրականացման ժամկետը՝ 1 տարի ✓ Ամառային ճամբարում ընգրկված երեխաների թիվը՝ 60	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիականհասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ			Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ առկա են
Միջոցառումներ (գործողություններ) ✓ Մշակութային կյանքի աշխուժացում, ✓ «Կոտայք-Բազե» երիտասարդական հավաքին մասնակցություն, ✓ Ջրվեժ բնակավայրում ամառային ճամբարի կազմակերպում, ✓ Մայիսի 9-ի միջոցառման կազմակերպում, ✓ Համայնքում ամանորի միջոցառումների անցկացում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 3,550.0 հազար դրամ			

Ծրագիր 2. Տեղեկատվական ծառայությունների մատուցման ապահովում					
Ծրագրի նպատակ Ապահովել տեղեկատվական ծառայությունների մատուցումը	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Տեղեկատվական ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին՝ 97 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Ապահովվել է տեղեկատվական ծառայությունների մատուցումը	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Հեռարձակված նիստերի թիվը՝ 10 ✓ Հայտարարությունների թիվը՝ 4 ✓ Ծրագրի իրականացման ժամկետ՝ 1 տարի ✓ Բնակիչների տեղեկացվածության մակարդակը, 60 %				Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներն առկա են
Միջոցառումներ (գործողություններ) ✓ Նիստերի ուղիղ հեռարձակում, ✓ Հայտարարությունների տեղադրում:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 470.0 հազար դրամ			
Ծրագիր 3. Հասարակական և կրոնական ծառայությունների ծախսեր					
Ծրագրի նպատակ Ապահովել համայնքում հասարակական և կրոնական կազմակերպությունների գործունեությունը:	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Բնակչության մասնակցությունը կրոնական միջոցառումներին՝ 35 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

Միջանկյալ արդյունք 1 Համայնքում ակտիվացել է կրոնական և հասարակական կյանքը:	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** ✓ Հասարակական կազմակերպությունների թիվը՝ 3 ✓ Բնակչության մասնակցության աստիճանը՝ 25 % ✓ Հասարակական և կրոնական ծառայությունների հասանելիությունը բնակչությանը, 90 % ✓ Ծրագրի իրականացման ժամկետ՝ 1 տարի				Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ առկա են
Միջոցառումներ (գործողություններ) ✓ Տրամադրել ֆինանսական միջոցներ հասարակական և կրոնական կազմակերպություններին:		**Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)** ✓ Համայնքի բյուջեի միջոցներ՝ 791.0հազար դրամ			
Ոլորտ 10.Առողջապահություն					
Ոլորտային նպատակ Նպաստել համայնքում առողջապահական ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը:		**Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Առողջապահական ծառայություններից բնակիչների բավարարվածության աստիճանը, 45%			
Ծրագիր 1. Համայնքի բուժ. ամբուլատորիաներին դրամաշնորհի հատկացում՝ գույքի ձեռքբերման և էներգետիկ ծախսերի փոխհատուցման նպատակով					
Ծրագրի նպատակ Բարձրացնել բուժ. ամբուլատորիաների կողմից մատուցվող ծառայությունների որակը	**Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ** ✓ Առողջապահական ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 98 %	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2018թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1 Բարելավվել է համայնքի	**Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**				Համապատասխան

